



Խաչիկ Դաշտենց

Ռանչպարների Կանչը

ԽԱՉԻԿ ԴԱՇՏԵՆՑԸ ԵՎ ԻՐ «ՌԱՆՉՊԱՐՆԵՐԻ ԿԱՆՉԸ»
ՎԻՊԱՍՔԸ

1

Խաչիկ Դաշտենցի՝ նշանավոր գրողի ու թարգմանչի մասին, դեռ գրվելու են հետազոտություններ: Չեն կարող չգրվել որովհետև և իբրև, բանաստեղծ ու արձակագիր, և իբրև թարգմանիչ, Խաչիկ Դաշտենցը հետագիծ է թողել ազգային գեղարվեստական գրականության և թարգմանության պատմության էջերում:

Ճիշտ է, օրերի աղմուկի մեջ հաճախ չէ, որ լսվում էր Դաշտենցի անունը, ինչպես սովորաբար լինում է այն մարդկանց հետ, ովքեր մի կողմ քաշված, ասես ստվերում, անաղմուկ ու անկոիվ, բայց ներքին խոր հավատով քաշում են իրենց լուծը:

Գալիս է, սակայն, արժեքները վերադասավորող ժամանակը և ամեն ինչ գցում իր տեղը:

Չգրված, բայց անխուսափելի օրենք:

Գալու է նաև Դաշտենցի ժամանակը, որը պատմելու է նրա կենսագրությունը՝ Սասնա լեռներից մինչև գաղթի սովահար ճամփաներ, այստեղից մինչև

Արևելյան Հայաստանի որբանոցային հանգրվաններ, Ալեքսանդրոպոլի ամերիկյան որբատներից մինչև պետական համալսարան, ուսուցչական ծառայությունից մինչև դասախոսական ամբիոն, գրական մուտքից մինչև իր գեղարվեստական և թարգմանչական մեծ գործը:

Խաչիկ Դաշտենցը իր գրական ուղերթն սկսեց բանաստեղծություններով: Նրա առաջին երգերն արժանացան Եղիշե Չարենցի հատուկ վերաբերմունքին:

Ժամանակի սկսնակ բանաստեղծների հոծ բազմության մեջ գեղարվեստական նոր շարժումը գլխավորող Չարենցը որոնում էր իր կնիքն ու շունչը, իրենց դեմքն ու ձեռագիրը կրող բանաստեղծների, նկատեց Դաշտենցին, ոգևորվեց նրա բանաստեղծությունների թարմ գույներով և գործի դրեց հրատարակչի իր ճաշակը՝ Դաշտենցի առաջին ժողովածուն («Երգերի գիրքը») հնարավորին չափ խնամքով տպագրելու համար:

Պահպանվել է Չարենցի երկու գրությունը՝ մեկն ուղղված Հայպետհրատի այն ժամանակվա տնօրեն Էդուարդ Չոփուրյանին, մյուսը՝ հայտնի ձևավորող-նկարիչ Տաճատ Խաչվանք յանին, ուր խոսք է գնում Խ. Դաշտենցի գրքի որակյալ տպագրության մասին:

Այգ ժողովածուին հաջորդեց «Բոց» (1936) գրքի տպագրությունը: Սա այնքան աղմուկ հարուցեց իր շուրջը, որ Դաշտենցը հեռացավ Մոսկվա և խարիսխ նետեց օտար լեզուների ինստիտուտի անգլերեն լեզվի բաժնում, նախապատրաստվելով թարգմանչի կոչման:

Մոսկովյան ուսումնագնացությունը վճռական դեր խաղաց Դաշտենցի ճակատագրի մեջ. անգլերենն այն հենարանն էր, որով նա գործի էր դնելու ներսում եղած բանաստեղծական կրակները:

Բնականաբար ծառանում է ի՞նչ թարգմանելու խնդիրը:

Օգնության է գալիս Ավետիք Իսահակյանը, որի խորհրդով դեռ տասնամյակներ առաջ հայտնի դիվանագետ Հովհաննես Խան-Մասեհյանը ձեռնարկել էր Շեքսպիրի թարգմանությանը:

Դաշտենցի պատմելով իր շեքսպիրյան ներշնչանքի խորհրդատուն նույնպես Ավ. Իսահակյանն է եղել, մի գրույցի ժամանակ հանձնարարել է շարունակել Խան-Մասեհյանի կիսատ թողած գործը և ամբողջացնել հայոց Շեքսպիրականը:

Վրա հասան Հայրենական պատերազմի դժվար տարիները: Դաշտենցը իր շեքսպիրյան գրադարանը՝ բրիտանական և ռուսական հրատարակություններ, Շեքսպիրին վերաբերող գիտական աշխատություններ և բանասիրական հետազոտություններ, երկլեզվյան բառարաններ, տեղափոխում է Թալինի Իրինդ գյուղը, ուր նա աշխատանքի էր անցել իբրև կոլտնտեսության նախագահի քաղաքական գծով տեղակալ:

Օրնիբուն աշխատել է իրեն առանձնապես հարագատ սասունցի գեղջուկների միջավայրում՝ գարնան ցանքից մինչև բերքահավաք և միայն գիշերային ուշ ժամերին հնարավորություն է ունեցել մոմի ճրագի աղոտ լույսի տակ առաջ տանել իր գրական գործը...

Խաչիկ Դաշտենցը բանահյուսական տարերքի և շնչի գրող է: Դրա վառ ապացույցն է հանրաճանաչ «Խողեղան» վեպը, որը, իր իսկ խոստովանությամբ, ծնվեց նույն Իրինդի Սասնա տան շառավիղներից ստացած տպավորություններից:

«Խողեղանը» յուրահատուկ տեղ ունի հայ սովետական վիպագրության մեջ:

Մի քանի առումներով:

Նախ, այդ վեպով շարունակվեց հայրենական գրականության այն ակոսը, որ իր մի շարք փայլուն պատմվածքներով բացել էր Ակսել Բակունցը: Դա 1915 թվականի հայկական կոտորածներից փրկված մարդկանց վերածնության գեղարվեստական մարմնավորման ակոսն է, որի մեջ մտավ նաև Դաշտենցը՝ ոչ միայն իբրև շարունակող, այլ ավանդները հարստացնող: Նա կերտեց հովիվ Ասատուրի մոնումենտալ կերպարը, որը եղավ առաջնեկը նույն խմորից կերտված մյուս կերպարների (Նահապետ, Ձորի Միրո և այլն):

Խնդրի Էությունը, սակայն, ոչ միայն կերպարի հայտնագործումն էր, այլև գործի դրված գեղարվեստական սկզբունքները, որը, դժբախտաբար, չի գնահատված ըստ իր արժեքի: «Խողեղան» վեպով Դաշտենցը ներկայացրեց Էպոսային արձակի առաջին հայտը՝ դրա մեջ դնելով իր բովանդակ սասունցիությունը, Սասնա Տան մերօրյա շատավիդների հոգեբանության կենցաղի, երազանքների անվրեպ իմացությունը:

Ժողովրդական ասմունք և պատմական հիշատակներ, ազգագրություն և հեքիաթներ, կենցաղ և գեղջկական պատումային ձևեր՝ իր ժողովրդագիտության այս պաշարները, որ Դաշտենցը կաթիլ առ կաթիլ ժողովել էր վաղ մանկությունից մինչև այրական հասակը, նա գործի դրեց բանահյուսական-Էպոսային արձակի մեծ խնդիրը լուծելու համար:

Դրա հաշորդ քայլը՝ նշանակալից քայլը, եղավ «Ռանչպարների կանչը» վեպը:

2

«Ռանչպարների կանչին» Դաշտենցը նվիրեց իր կյանքի և հոգու մեծ հատվածը: Թեև հաճախ էր վերադառնում դրան, բայց չէր շտապում՝ ցանկանալով նրա Էջերում ասպարեզ հանել իր քնարն ու Էպիկան, դավանանքն ու երազանքը, ներշնչանքն ու տարերքը:

«Ռանչպարների կանչը», որն արդարև, Դաշտենցի գլխավոր գիրքն է, պատմում է 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի հայ ազգային ազատագրության այն հերոսների մասին, որոնք պատմությանը հայտնի են «հայդուկներ» (Ֆիդայիներ) անունով: Հայդուկների պարտիզանական շարժումը դեմոկրատական խոր արմատների և ազատագրական արդար շնչի մի շարժում, ծնվեց իբրև թուրքական սաստկացող բռնությունների դեմ ուղղված ընդդիմադրություն, ինչպիսիք էին նույն ժամանակաշրջանում նույն ուղղությամբ Բուլղարիայում, Հունգարիայում, Հունաստանում, Հարավսլավիայում ծնված շարժումները:

«Հայդուկի» բառարանային բնորոշումը՝ «գեղջուկ, որը ոտքի է ելել իր իրավունքների պաշտպանության համար», հավասարապես վերաբերում է նաև հայոց հայդուկներին, որոնք իրենց կյանքը դրին հայրենյաց փրկության

գոհասեղանին, արժանանալով ժողովրդական լայն շարքերի հիացմունքին:
Բնավ պատահական չեն այն բազմաթիվ լեզենդներն ու բազմատեսակ երգերը,
որ ժողովուրդը հյուսել է իր ազատասիրական ապրումներն ու փրկության
հույսերը արտահայտող հերոսների մասին:

Ժողովրդական վրիժառուների պարտիզանական շարժումը, դժբախտաբար չի
արժանացել ոչ պատմագիտական անաչառ քննության, ոչ էլ դարձել է
գեղարվեստական ներշնչանքների նյութ, ինչին արժանի է անվերապահորեն:

Այս վերաբերմունքի՝ «լռության» մեջ, ըստ երևույթին, գեր է ունեցել երկու
հանգամանք:

Մեկ այն, որ պարտիզանական տարերքին հանձնված, միասնական ծրագրեր
չունեցող շարժումը հետևանքների մեջ պարտվածների շարժում էր, և, երկրորդ,
դաշնակցության գործիչները ազատագրական շարժման ինչ-ինչ շրջակետերում
փորձեցին ժողովրդական արդար շարժումները հարմարեցնել իրենց
կուսակցական նեղ նկրտումներին և ստվեր զցեցին շարժման բուն էության վրա:

Հազիվ թե հարկ կա բացատրելու, որ այս հանգամանքները հիմնավոր
փաստարկներ չեն՝ լռության մատնելու ազգային-ազատագրության պայքարի
հերոսական էջը, որն ուղղակի հայցում է գեղարվեստական մարմնավորում:

Տարիներ առաջ այդ գործին ձեռք մեկնեց Խաչիկ Դաշտենցը, որն իր հարուստ
իմացություններով և գեղարվեստական նախասիրություններով այն գրողն էր,
որը կարող էր շունչ ու մարմին տալ մեր պատմության հերոսական այդ էջին:

Դա է հավաստում «Ռ-անչպարների կանչը» գիրքը, որը, Դաշտենցը արդեն
պատրաստում էր տպագրության, երբ վրա հասավ անակնկալ մահը...

Դաշտենցի գրվածքի խորագիրը («Ռ-անչպարների կանչը») և ժանրային
տարբերարկումը (վիպասք) ձևական «մանրուքներ» չեն, այլ այն կարևոր
բանալիներն են, որոնցով պետք է բացել գրքի բովանդակությունը:

«Ռ-անչպարները» որոշակի պատմագիտական-գեղարվեստական հայացքի
ցույցում է: Հայոց ազատագրության անձնագոհ մարտիկները՝ հայդուկները, ըստ

Ժողովրդի պատմական հիշողության մեջ հարատևող տվյալների, ամենաստվորական, անշար, խաղաղասեր, իրենց արտ ու կալին, հողին ու ջրին գամված ռանչպարներ են, որոնք, սակայն, դաժան հանգամանքների բերումով ստիպված են գենքի դիմել պաշտպանելու իրենց մարդկային իրավունքներն ու արժանապատվությունը: Որդեղրելով ժողովրդական հավատի վրա խարսխված այս կոնցեպցիան և ռանչպարության աշխարհագրագոյությունը գնելով իր պատումի հիմքում, Դաշտենցը բացահայտում է ազատագրական շարժման դեմոկրատական ուղղությունը, դրանով էլ բացատրելով շարժման հերոսական բովանդակությունը, պատմության հայտնի հերոսների հոգեկան ձգտումների վեհությունն ու գեղեցկությունը:

Սա հայ ժողովրդական էպոսից եկող աշխարհայացքային գիծ է, վերին աստիճանի արդար և ճշգրիտ մեկնաբանություն:

Ավետիք Իսահակյանի թղթերի մեջ պահպանվել է մի գրություն, ուր վարպետը ժամանակակից հայ արձակագիրներից էպոսային-ասքային տարերքի գրող է համարում Խաչիկ Դաշտենցին, գնահատելով նրա հնարավորությունները:

Ըստ երևույթին նա տեղյակ է եղել Դաշտենցի մտահղացմանը և երկուստեք գրույցների միջոցին էլ ծնվել է վիպասքի գաղափարը:

Իրապես, խառնվածքով լինելով պատմողական-ասացողական շնչի գրող, Դաշտենցը գտել է նյութի մատուցման ամենահարմար, բնական ձևը:

«Ռանչպարների կանչին» եթե նայենք դասական հոգեբանական վեպի կանոններով, հազիվ թե կարողանանք ճիշտ գնահատել նրա նշանակությունը. չկան ոչ հոգեբանական մանրակրկիտ վերլուծումներ, ոչ էլ սյուժետային ցայտուն փոխհարաբերություններ: Սա բանահյուսական-պատումային արձակ է, արձակի այն որակը, որի մոռացված ուղիները նորից շատ որոշակի երևում են 20-րդ դարի գեղարվեստական որոնումների մեջ:

Գրական դավանանքով արտաքուստ «պահպանողական» այս գրվածքով Դաշտենցը վկայում է ժամանակակից արձակին բնորոշ դիմադրության իր գագաթությունը, այդ դիմադրության հայտնաբերելու համար դառնալով դեպի ազգային

պատմության ոճական գույները, ժողովրդական փորձի մեջ բեկված արտահայտման եղանակները:

Ազատագրական շարժման վիպասքը ստեղծելու համար Դաշտենցը հազվագյուտ թափանցումներով օգտվել է այդ շարժման էությանն ամենից ավելի պատշաճող բնական ու պարզ, պարզունակության չափ պարզ, միամիտ, «անարվեստ» պատումի ձևերից ու բառապաշարային շերտերից:

Տիրապետելով հայ ժողովրդական վիպերգի գաղտնիքներին, Դաշտենցը հանդես է եկել իբրև ասացող, ժողովրդական ասմունքող, բնավ տուրք չտալով ժողովրդական պատմելիաձևի արտաքին ոճավորմանը:

Իբրև ժանրային կառուցվածք «Ռանչպարները» նորագույն հայ գրականության թռիչքներից մեկն է, «ռամիկ» արվեստի հազվագյուտ խոր ներշնչանք:

Հայոց դպրևանքի պատանիներից մեկը՝ «Մախլուտո» մականունով, «Ռանչպարների կանչով» դառնում է ազգային շարժման գինվոր և այս կետից սկսած պատմում է իր կյանքի դրվագները՝ «նովելային պատումները», ուր տեղ ունեն և՛ այդ շարժման առասպելական անունները (Արաբո, Աղբյուր Սերոբ, Սոսե, Գևորգ Չաուշ, Անդրանիկ), և շարքային մասնակիցները:

Մախլուտոյի պատմությունների մեջ ազատագրության հերոսները երեվում են հայրենասիրական խոր ապրումներով, բարոյական բարձր սկզբունքներով, ռամկական բնավորությամբ և ասպետական վարքագծով:

Իր վիպասքը կառուցելիս Դաշտենցը լիաբուռն օգտվել է բանահյուսական նյութերից՝ էպիկական և քնարական երգեր, ավանդություններ և թևավոր խոսքեր, ինչպես և դիտական հիշատակարաններից, ազգագրական-տեղագրական, աշխարհագրական հետազոտություններից, առավելագույնս մնալու համար պատմության իրական հողի վրա:

Ցանկանում ենք ընդգծել ևս երկու մոմենտ, որոնք գաղափարական լիարժեք շեշտեր են տալիս Դաշտենցի վիպասքին:

Դրանցից մեկը դաշնակցության գաղափարախոսությունից շարժումը սահմանազատելու տենդենցն է, պատմականորեն միանգամայն ճիշտ տենդենց: Բանն այն է, որ հայդուկներն իրենց բուն ժողովրդական արմատներով չէին կարող հենարան լինել ազգայնական «բաղձանքների» համար, ինչին ձգտում էր դաշնակցությունը: Ավելին՝ նրանք իրենց ձգտումներով, հայրենի հողի ազատագրության երազներով ու մաքառումներով անհարազատ էին դաշնակցությանը, որը և Դաշտենցը ներկայացրել է վեպի մի քանի կարևոր հատվածներում, կապված գերազանցորեն Անդրանիկ գորավարի կերպարի հետ:

Մյուս էական գաղափարական շեշտը հայ ռանչպարների քաղաքական կողմնորոշման, ռուսական կողմնորոշման՝ դարձյալ պատմականորեն հավաստի բացահայտումն է: Թուրքական բռնություններին ենթակա հայ գեղջուկները, բնականաբար, իրենց հայացքն ուղղում են դեպի Ռուսաստան, այդտեղից սպասելով փրկության լույսը: Այս կողմնորոշման բնական շարունակությունն է ռանչպարների մնացորդների համախմբումը Աովետական Հայաստանի հողի վրա, որ մարմին են առնում նրանց պատմական երազները:

Խաչիկ Դաշտենցի «Ռանչպարների կանչը» վիպասքը և իր գաղափարական ազնիվ պաթոսով, և գեղարվեստական կատարման աստիճանով հայ գրականության նշանակալից երկույթն է:

ՍՈՒՐԵՆ ԱՂԱԲԱԲՅԱՆ